Պատմության օլիմպիադայի մարզային փուլ (2024-2025 ուստարի)

12-րդ դասարան (տևողությունը՝ 150 րոպե)

ա) Հայոց պատմություն (15 միավոր)

1. Ե՞րբ է հիմնադրվել Հնչակյանների պաշտոնաթերթը. 0,5 մ.
   ա/ 1887 թ. բ/ 1889 թ. գ/ 1888 թ. դ/ 1892 թ.
2. Ո՞վ է 1989 թ. նշանակվել Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ. 0,5 մ.
   ա/ Նիկոլայ Ռիժկով բ/ Հենրիխ Պողոսյան գ/ Արկադի Վոլսկի դ/ Բորիս Կևորկով
3. Որտե՞ղ է հրավիրվել Հայոց եկեղեցու առաջին ժողովը. 0,5 մ.
   ա/ Էջմիածնի Մայր տաճարում բ/ Աշտիշատի Մայր տաճարում
   գ/ Սուրբ Կարապետ եկեղեցում դ/ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ վանքում
4. Ո՞վ է գլխավորել 1904 թ. Սասունի ապստամբության զինվորական մարմինը. 0,5 մ.
   ա/ Արմենակ Ղազարյան բ/ Գևորգ Չավուշ գ/ Անդրանիկ Օզանյան դ/ Հակոբ Կոտոյան
5. Ո՞ր թվականին է ստեղծվել Մուրադ-Ռափայելյան վարժարանը. 0,5 մ.
   ա/ 1832 թ. բ/ 1870 թ. գ/ 1864 թ. դ/ 1878 թ.
6. Քանի՞ գյուղ ուներ Զեյթունը 19-րդ դարի առաջին քառորդում. 0,5 մ.
   ա/ 30 բ/ 18 գ/ 40 դ/ 52
7. Ո՞ր արքայի օրոք է կնքվել Կահիրեի հաշտության պայմանագիրը. 0,5 մ.
   ա/ Հեթում 1-ին բ/ Լևոն 5-րդ գ/ Հեթում 2-րդ դ/ Գվիդոն Լուսինյան
8. Ե՞րբ է հայտարարվել նոր տնտեսական քաղաքականությունից հրաժարվելու մասին. 0,5 մ.
   ա/ 1927 թ. բ/ 1928 թ. գ/ 1921 թ. դ/ 1929 թ.
9. Ե՞րբ է ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար ընտրվել Սուրեն Թովմասյանը: 0,5 մ.
10. Ո՞ր դարում է գրվել «Պատմություն նահանգին Սիսական» աշխատությունը: 0,5 մ.
11. Ո՞վ է Վանի ռուսական հյուպատոսությունից աջակցել «Սև խաչ» կազմակերպությանը: 0,5 մ.
12. Որքա՞ն էր 1986 թ. դրությամբ ՀԽՍՀ քաղաքային բնակչության թիվը: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
   ա/ Անդրեյ Մանդելշտամի ծրագրի հրապարակումը
   բ/ Պողոս Նուբարի նշանակվելը կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ
   գ/ Հայոց ազգային բյուրոյի ստեղծումը
   դ/ Բալկանյան առաջին պատերազմի ավարտը
   ե/ Մ. Գիրսի և Հ. Վանգենհայմի ծրագրի կազմումը
   զ/ Վեց տերությունների մասնակցությամբ Կ. Պոլսի խորհրդաժողովը 1910-ական թթ.
   է/ Ն. Հոֆի ժամանումը Արևմտյան Հայաստան
   ը/ Լ. Վեստենենկի ընտրվելը տեսուչ
   թ/ 1876 թ. օսմանյան սահմանադրության վերականգնումը

1	2	3	4	5	6	7	8	9

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր. 1,5 մ. (6 X 0,25 մ.)
   1. Արիստակես Լաստիվերցի 2. Հովհաննես Դրասխանակերտցի
   3. Սմբատ Գունդստաբլ 4. Մատթեոս Ուռհայեցի
   5. Ստեփանոս Տարոնեցի 6. Գրիգոր Տաթևացի

   ա. «Տարեգիրք» բ. «Ժամանակագրություն» գ. «Տիեզերական պատմություն»
   դ. «Պատմութիւն հայոց» ե. «Գիրք հարցմանց» զ. «Պատմութիւն»

1	2	3	4	5	6

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Ռուսա 1-ինը շարունակել է Սարդուրի 2-րդի քայլերը գերկենտրոնացված պետություն ստեղծելու ճանապարհին:
բ/ Հայկական պետականությունը նախարարական համակարգի միջոցով պահպանվել է միայն զարգացած միջնադարում:
գ/ Տեղեկանալով, որ Գրիգորը Տարոնում է, Տրդատ Մեծը, Աշխեն թագուհին, Խոսրովիդուխտը և հայոց զորքը գնում են նրան ընդառաջ, հասնում են Բագավան՝ Նպատ լեռան ստորոտը, և մեծ պատիվներով դիմավորում Տարոնից այնտեղ եկած կաթողիկոսին:
դ/ Վանի թագավորությունում զորքի գերագույն հրամանատարը երկու սպարապետներն էին:
ե/ Ըստ «Սարդուրյան տարեգրության»՝ զինված ուժերի ընդհանուր թիվը շուրջ 350 000 էր:
զ/ Վանի թագավորության նվաճած երկրներում իշխանությունը կարող էր թողնվել նախկին թագավորին կամ ցեղապետին, որը թեև հարկ չէր վճարում, սակայն պարտավորվում էր իր զորքով մասնակցել Վանի տիրակալի արշավանքներին:
է/ Հայկազուն-Երվանդականները Հայաստանում իշխել են միայն Ք. ա. 521-331 թթ.:
ը/ Գանձագին հողերը պետական էին՝ ենթակա առուվաճառքի:
թ/ Ք. ա. 68 թ. գարնանը Լուկուլլոսի բանակը դուրս եկավ Կոմմագենեից և անցնելով Հայկական Տավրոսը՝ Արածանի գետի ափերով շարժվեց դեպի Արտաշատ:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները: 1 մ. (2 X 0,5 մ.)

ա/ Հայաստանում բոլոր տեսակի գյուղատնտեսական ապրանքներից գանձվող հարկը պարենհարկն էր:
բ/ Կոմունաները, արտելները, սովխոզները գյուղացիական անջատ տնտեսություններ էին:
գ/ ՀԽՍՀ-ում ուրբանիզացումը 1980-ական թթ. հանգեցնում էր քաղաքների թվի աճին և քաղաքատիպ ավանների նվազմանը:
դ/ ԽՍՀՄ-ում Գորբաչովյան վերակառուցման տարիներին արագացմամբ ենթադրվում էր կենտրոնացնել բոլոր միջոցները՝ արդիականացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, մեքենաների և սարքավորումների թողարկումն ընդլայնելու համար:
ե/ Լիազոր ներկայացուցիչների համագումարի կողմից ընտրված Ազգային խորհուրդը վերահսկվում էր Հատուկ կառավարման կոմիտեի կողմից, իսկ որոշումները պարտադիր էին Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածքում:
զ/ 1991 թ. ԽՍՀՄ-ում տեղի ունեցած օգոստոսյան խռովության ընթացքում ստեղծված կառավարման մարմինը կոչվում էր Արտակարգ դրության հանրային կոմիտե:
է/ Արդյունաբերացման նպատակն էր ԽՍՀՄ ներկրել մեքենաներ և սարքավորումներ, որոնք կնպաստեին երկրի պաշտպանունակության զարգացմանը:
ը/ Գյուղմիասիարկի ձախողման արդյունքում 1924 թ. հենց սկզբից պետությունը հրաժարվում է բնամթերային հարկաձևից:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Պոլոժենիեն Հայ եկեղեցին դնում էր ռուսական պետությունից կախվածության մեջ, սակայն հայությանը հոգևոր-մշակութային որոշ ինքնավարություն էր տալիս:
բ/ Ըստ Պոլոժենիեի՝ հայության ընդհանուր ժողովն առաջադրելու էր կաթողիկոսի երկու թեկնածու, որոնցից մեկին պետք է ընտրեր ռուսական կայսրը:
գ/ 20-րդ դարի սկզբին գյուղատնտեսության զարգացումն արագացել է ստոլիպինյան վերափոխումների շնորհիվ:
դ/ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին մասնակցել են հեծյալ և հետևակային կամավորական ութ ջոկատներ:
ե/ Գրիգոր Արծրունու հիմնադրած «Մշակ» թերթը դարձել է ոչ միայն հայկական պահպանողականության, այլև առհասարակ հայ ազգային-հասարակական մտքի յուրահատուկ դարբնոց:

զ/ Պահպանողականների ազգանպաստ հայացքները կիսում էին պատմաբաններ Ս. Պալասանյանը, Ա. Երիցյանը, գրող Ծերենցը և ուրիշներ:
է/ Ազգային սահմանադրությունը Արևմտյան և Արևելյան Հայաստանի ու ամբողջ հայության կրթամշակութային կյանքը կարգավորող իրավական կարևոր փաստաթուղթ էր:
ը/ 1883 թ. Երևանում Հայասեր-ազգասեր խմբակի անդամները խուզարկությունների ու բանտարկությունների են ենթարկվել, իսկ շատերը՝ աքսորվել:
թ/ 1905 թ. Ռուսաստանում սկսված հեղափոխության ընթացքում հետադիմական ուժերի նպատակն էր տապալել ցարիզմը և երկրում հաստատել ժողովրդավարական կարգեր:

1	2	3

18. Գտե՛ք, նշե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (սխալը գտնելը՝ 0,5 մ., ուղղումը՝ 0,5 մ.)
1945 թ. մարտին Գևորգ Չորեքչյանը դիմել է Ստալինին և Չերչիլին՝ խնդրելով թույլատրել տեղահանված և Ուրալում վերաբնակեցված 16 000 ղրիմահայերին վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը կամ Հայաստան:

19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
«Հայտնե՛ք կորպուսի հրամանատարին, որ ես գրոհում եմ անվերադարձ: Եթե ... չգրավեմ գիշերը, ապա կվերցնեմ ցերեկը կամ կշարունակեմ գրոհը մինչև հաջորդ գիշեր»:
ա. Ո՞վ է նշված խոսքերի հեղինակը:
բ. Ո՞ր քաղաքի գրավման մասին է մեջբերված խոսքը:
գ. Ու՞մ է պատասխանել մեջբերված խոսքերի հեղինակը:

բ) Համաշխարհային պատմություն (5 միավոր)

1. 1192 թ. Ճապոնիայի կայսրը ո՞ւմ է տվել սյոգունի տիտղոս. 0,5 մ.
ա/ Տոգուկավա բ/ Սոգա գ/ Յորիմոտո դ/ Տայկա
2. Ո՞վ է Ռուսաստանում առաջինը հռչակվել կայսր. 0,5 մ.
ա/ Իվան Ահեղ բ/ Նիկոլայ 1-ին գ/ Ալեքսեյ Միխայիլովիչ դ/ Պետրոս 1-ին
3. Ե՞րբ է Հիտլերը ստանձնել Գերմանիայի ռայխսկանցլերի պաշտոնը. 0,5 մ.
ա/ 1929 թ. բ/ 1933 թ. գ/ 1932 թ. դ/ 1934 թ.
4. Ո՞վ էր ԱՄՆ նախագահը ամերիկյան զորքերի՝ Իրաք ներխուժման ժամանակ. 0,5 մ.
ա/ Թեոդոր Ռուզվելտ բ/ Ջորջ Քլինթոն գ/ Ջորջ Բուշ Ավագ դ/ Ջորջ Բուշ Կրտսեր
5. Ինչպե՞ս է կոչվում Մոլդովայի մաս կազմող և Դնեստր գետից արևելք գտնվող ինքնահռչակ հանրապետությունը: 0,5 մ.
6. Համապատասխանեցրե՛ք. 1 մ. (4 X 0,25 մ.)

1. ռեալիզմ	2. ռոմանտիզմ	3. բարոկկո	4. կլասիցիզմ
ա. Ժ. Մոլիեր	բ. Պ. Ռուբենս	գ. Ջ. Բայրոն	դ. Չ. Դիքենս

1	2	3	4

7. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)

ա/ Բասկերի ընդհատակյա ակաբեկչական կազմակերպությունը տասնամյակներ շարունակ պայքարում է հանուն բասկ ժողովրդի անկախացմանը Իսպանիայից:
բ/ 1928 թ. մի շարք երկրների կողմից ստորագրված Լոնդոնի պայմանագիրը կոչվում է նաև Բրիան-Քելոգի պակտ:
գ/ ԱՄՆ նախագահ Ֆ. Ռուզվելտը նշել է. «Նա, ով կառուցում է գործարան, տաճար է կառուցում»:
դ/ ԽՍՀՄ-ը 1937 թ. արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալով Եվրոպայում զբաղեցնում էր երկրորդ տեղը:
ե/ 1919 թ. Փարիզի խորհրդաժողովում արաբական աշխարհի շահերը ներկայացնող Էմիր Ֆեյսալը առաջարկում էր թուրքերից ազատագրված շրջաններում ստեղծել միասնական պետություն:

զ/ 1925 թ. Ռեզա խանը Մեջլիսի որոշմամբ հռչակվել է Իրանի շահ՝ հիմնելով Փահլավիների արքայատոհ-մը:
է/ 1935 թ. իտալական բանակը ներխուժել է Ազգերի լիգայի անդամ Եթովպիա և գրավել մայրաքաղաք Խարտումը:
ը/ 1939 թ. ԽՍՀՄ-ը ռազմական գործողություններ էր սկսել Ճապոնիայի դաշնակից Մոնղոլիայի դեմ, որը կարող էր վերաճել խորհրդա-ճապոնական պատերազմի:

1	2	3

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

10.02.2025 թ.